



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի 2009թ.

N 12-Ն

ք.Ստեփանակերտ

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հացահատիկային մշակաբույսերի բերքատվության բարձրացման միջոցառումների ծրագիրը:

2. Սահմանել, որ`

1) սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրի կատարման հսկողությունը վերապահվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը յուրաքանչյուր տնտեսական տարին ավարտվելուց հետո` մեկամսյա ժամկետում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն` կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԲԵՐՔԱՏԿՈՒԹՅԱՆ  
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

I. ՀԱՑԱՀԱՏԻԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

III. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

VI. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

VII. ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

VIII. ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ

# Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հացահատիկային մշակաբույսերը իրենց նշանակությամբ և զբաղեցրած տարածքներով, առաջնակարգ համարվող, հանրապետության բնակլիմայական բոլոր գոտիներում մշակվող ամենակարևոր մշակաբույսերն են:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որվերջին տարիներին միջազգային շուկաներում սրընթաց կերպով աճում են հացահատիկի պահանջարկը և գները, ներկայիս մեր տնտեսաքաղաքական պայմաններում էՄԼ ավելի է կարևորվում հացահատիկի դերը՝ որպես պարենային անվտանգության բաղկացուցիչ մաս:

Հանրապետությունում 2001-2008 թվականներին հացահատիկային մշակա-բույսերը զբաղեցրել են 45.3 հազար հեկտար տարածքներ, որոնցմիջին բերքատվությունը կազմել է 15.1 ց/հա, համախառն բերքը կազմել է 68.5 հազար տոննա:

Հանրապետությունում ռեալ նախադրյալներ կան առկա ցանքատարածությունների ավելացման և բերքատվության բարձրացման միջոցով ապահովել հացահատիկի արտադրության ծավալների աճ:

Հացահատիկային մշակաբույսերի բերքատվության ներկայիս ցածր մակարդակը հետևանք է մի շարք պատճառների, որոնցմեջ առանձնանում են՝ որակյալ սերմացուների պահանջարկի բավարարման ցածր մակարդակը (այն ապահովվում է առավելագույնը մոտ 15 տոկոսով), հողի մշակության ագրոտեխնիկական կանոնների չպահպանելը, հանքային և օրգանական պարարտանյութերի անբավարար օգտագործումը, հիվանդությունների, վնասատուների և հատկապես մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքների ցածր մակարդակը, ցանքաշրջանառության չկիրառումը և ոռոգման համակարգի բացակայությունը:

Հացահատիկային տնտեսության զարգացմանը խոչընդոտող գործոններից է հացահատիկի շուկայի անկատարությունը: Հացահատիկի ապրանքային խմբաքանակները գնվում են վերամշակող ձեռնարկությունների կողմից ցածր գներով, որն էլ բերում է հացահատիկի արտադրության եկամտաբերության իջեցմանը: Նշվածի հետևեկտեղչի օգտագործվում հացահատիկի արտահանման հնարավորությունները:

Հացահատիկի արտադրության ցածր արդյունավետությունը հետևանք է նաև համապատասխան տեխնիկական բազայի և պայմանների բացակայության, օգտա-գործվող տեխնիկական միջոցների ֆիզիկական և բարոյական մաշվածության, ֆի-նանսական միջոցների անբավարարության:

Ստեղծված իրավիճակը պահանջում է հացահատիկի արտադրության բնագավառում արմատական քայլերի ձեռնարկում՝ ուղղված ագրոտեխնիկական պահանջների կատարմանը և արտադրանքի շուկայահանման գործընթացի կատարելագործմանը:

## I. ՀԱՑԱՀԱՏԻԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Հանրապետությունում հացահատիկի արտադրության բնագավառի վերջին տարիների վիճակագրական տվյալների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ճյուղում գրանցվել են բացասական երևույթներ, ինչպես արտադրության ծավալների, այնպես էլ բերքատվության ցուցանիշների առումով: Այս մասին վկայում են հացահատիկի արտադրության հիմնական ցուցանիշների վերաբերյալ տվյալները (աղյուսակ 1):

Աղյուսակի տվյալներից երևում է, որ տարեցտարի հանրապետությունում կրճատվում են ինչպես մշակաբույսերի ցանքատարածությունները, այնպես էլ մեկ հեկտարի բերքատվությունը: Հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները 2001 թվականին 27.8 հազար հեկտարից աճել և 2005 թվականին կազմել է 63.6 հազար հեկտար, իսկ հետագայում այն նվազել և 2007 թվականին կազմել է 47.2 հազար հեկտար, 2008 թվականին՝ 36.3 հազար հեկտար:

Հանրապետությունում չափազանց վատթար վիճակում է գտնվում հացահատիկային տնտեսության արդյունավետության և զարգացման համար նախապայման հանդիսացող սերմնաբուծության համակարգը, հատկապես բարձր վերարտադրութ-

յան սերմերի արտադրության և վերարտադրության բնագավառում: Տնտեսվարողները օգտագործում են անհայտ ծագման, ցածր որակի սերմեր, որի հետևանքով էլ ցածր է բերքատվության մակարդակը, ստացվող արտադրանքի որակը և արտադրության արդյունավետությունը:

Ընդհանուր առմամբ չի պահպանվում մշակության ագրոտեխնիկական պահանջները, անհրաժեշտ պայքար չի տարվում բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ, խնդիրներ կան՝ կապված մշակաբույսերի պարարտացման և ցանքաշրջանառության կիրառման ուղղությամբ, որի հետևանքը նույնպես բերքատվության ցածր մակարդակը և արտադրության ցածր եկամտաբերությունն է:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է համապատասխան ծրագրային միջոցառումների իրականացում՝ ուղղված հացահատիկի մշակության ագրոտեխնիկական պահանջների, ոռոգման համակարգերի կատարելագործմանը, տեխնիկական զինվածության բարձրացմանը, իրացման և այլ խնդիրների լուծմանը:

Առանձնահատուկ տեղաբեր է գրավի ոռոգվող տարածքների ընդարձակումը: 2012 թվականին այն պետք է հասցվի ոչ պակաս քան 9000, իսկ 2015 թվականին՝ 12500 հեկտարի, որը հացահատիկի կայուն բերքի ստացման լավագույն երաշխիք կհանդիսանա:

## II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՏՈՒՄ

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հացագործությունը լինելով ավանդական զբաղմունք հանրապետության բնակչության համար, իր կարևորագույն նշանակությունը պահպանում է նաև ներկա փուլում, որպես պարենային անվտանգության երաշխիք: Սակայն վերջին տարիներին այն հայտնվել է անկումային իրավիճակում: Այսպես, եթե 1988 թվականին հանրապետությունում արտադրվել է մոտ 108 հազար տոննա, իսկ 1990 թվականին՝ 95.3 հազար տոննա հացահատիկ և միջին բերքատվությունը կազմել է համապատասխանաբար 27.3 և 25.8 ց/հա, ապա 2007 թվականին արտադրվել է մոտ 52.3 հազար տոննա 11.0 ց/հա միջին բերքատվությամբ: Երկրի տնտեսության, մասնավորապես հանրապետության գյուղատնտեսության, համար հացահատիկային տնտեսությունը ունի բացառիկ կարևոր տեղ: Այդ են վկայում մի շարք ցուցանիշներ: Այսպես ընդհանուր ցանքատարածությունների մեջ հացահատիկային մշակաբույսերի տեսակարար կշիռը 2001-2007 թվականներին. միջինը կազմել է 93.8 տոկոսը: Նշված ժամանակահատվածում գյուղատնտեսության և բուսաբուծության համախառն արտադրանքի մեջ հացահատիկային մշակաբույսերի տեսակարար կշիռը կազմում է համապատասխանաբար 30.4 և 49.1 տոկոս (աղյուսակ 2):

Գյուղատնտեսության մեջ հացահատիկային տնտեսության կարևոր նշանակությունը վկայում է, որ հանրապետության գյուղատնտեսության ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացումը, գյուղատնտեսության զարգացումը և գյուղական բնակավայրերում զբաղվածության ապահովումը ու եկամտունեքի ավելացումը պահանջում են հացահատիկային տնտեսության վերականգնմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում, որը ներառելու է կազմակերպական, ագրոտեխնիկական մի շարք խնդիրների լուծում:

Այն առավել ևս կարևորվում է նրանով, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ավանդական համարվող ճյուղը՝ խաղողագործությունը, հայտնվել է ճգնաժամային իրավիճակում՝ կապված արտադրվող մթերքների իրացման շուկաների բացակայության և շրջափակման հետ:

## III. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակն է ագրոտեխնիկական և կազմակերպատնտեսական միջոցառումների իրականացման արդյունքում հացահատիկային մշակաբույսերի բերքատվության և հացահատիկի արտադրության արդյունավետության բարձրացումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին ժամանակներում կտրուկ աճել են հացահատիկի գները միջազգային շուկաներում, ինչպես նաև ելնելով երկրի պարենային անվտանգության ապահովությունից, խնդիր է դրվում 2009 թվականին բերքի տակ ունենալ առնվազն 50 հազար հեկտար հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածքներ: Ընդ որում 2008 թվականի աշնանը կատարել ոչ պակաս քան 47 հազար հեկտար աշնանացան, իսկ 2009 թվականին գարնանը՝ 3 հազար հեկտար գարնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանքներ: Առաջիկա 4 տարիներին (մինչև 2012 թվականը) այդ տարածքներն աստիճանաբար ընդլայնել և 2012 թվականին բերքի տակ ցանել մոտ 51.5 հազար հեկտար հացահատիկային մշակաբույսեր, որից 6.2 հազար հեկտար եզիպտացորեն:

Եզիպտացորենի ցանքերի տեսակարար կշռի աստիճանաբար ավելացումը ընդհանուր հացահատիկի ցանքատարածքների մեջ պայմանավորված է նրանով, որ ակնկալվում է միավոր տարածությունից ստանալ ավելի քան 2 անգամ բարձր բերք, քան մյուս հացահատիկային մշակաբույսերից՝ սպառման շուկայի հստակ առկայության և շուկայական գների գրեթե հավասարության պայմաններում: Բացի այդ, այն համարվում է ոչ միայն պարենային, այլ նաև արժեքավոր անասնակեր:

2009-2012 թվականներին հացահատիկային մշակաբույսերի տակ ցանվելիք տարածքները ըստ շրջանների ներկայացված են աղյուսակ 3-ում:

## IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ծրագրի իրականացումը պահանջում է հացահատիկի մշակության ագրոտեխնիկական, կազմակերպատնտեսական մի շարք միջոցառումների և պահանջների իրականացում, որոնք պայմանավորում են ենթաճյուղի արդյունավետությունը:

### Ագրոտեխնիկական միջոցառումներ

#### 1. Հողի մշակում

Ներառում է հետևյալ միջոցառումները.

- 1) խոզանի երեսվար, պետք է կատարվի 8-12 սմ խորությամբ բերքահավաքից անմիջապես հետո,
- 2) խոզանի երեսվարից հետո 2-3 շաբաթ անց պետք է կատարվի խոր վար 27-30 սմ խորությամբ,
- 3) ցանքից 3-6 օր առաջ պետք է կատարվի նախացանքային կուլտիվացիա 6-8 սմ խորության վրա,
- 4) ամիրաժեշտ միջոցառում է սև ցելի կատարումը և ցելադաշտի գարնանային և ամառային մշակումները:

#### 2. Պարարտացում

Պարարտանյութերի կիրառումը բարձրացնում է հացահատիկային մշակաբույսերի հատիկի դաշտային ծլունակության մակարդակը, ուժեղացնում է բույսերի թփակալումը, ձմեռադիմացկունությունը, դիմացկուն է դարձնում հիվանդությունների նկատմամբ, մեծացնում է հասկերը և հատիկները, ավելացնում է յուրաքանչյուր հասկում հատիկների քանակը և կշիռը, բարելավում է հատիկի քիմիական բաղադրությունը և բարձրացնում բերքատվությունը:

Հացահատիկային մշակաբույսերն անհամեմատ ավելի մեծ պահանջ ունեն ազոտի, ֆոսֆորի և կալիումի նկատմամբ: Ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի հիմնական մասը պետք է հողմտցնել մինչև նախացանքային մշակումը, իսկ փոքր մասը՝ ցանքի ժամանակ սերմացուի հետ, իսկ ազոտականի 1/3-ը՝ աշնանը, ցանկալի է ցանքակից, 2/3-ը՝ վաղ գարնանը սնուցման կարգով:

2009-2012 թվականներին հանքային պարարտանյութերի պահանջի և դրանց ձեռք բերման համար անհրաժեշտ գումարների մասին հաշվարկը ներկայացված է 4-րդ աղյուսակում:

Ծրագրով նախատեսված տարածքներում հացահատիկային մշակաբույսերի մշակության համար տարեկան պահանջվում է մոտ 22.6 հազար տոննա հանքային պարարտանյութեր, որի համար անհրաժեշտ ներդրումները կկազմեն 2060.0 մլն

դրամ: Պարարտացման հիմնավորված նորմաներ ունենալու նպատակով «Բույսերի պաշտպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը կից կատեգորիալ հողերի ագրոքիմիական հետազոտությամբ և պարարտացման արդյունավետ նորմաների որոշման գործառույթ ունեցող ստորաբաժանում:

### **3. Ցանքի կատարման ժամկետը և նորմաները**

Աշնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանքը հանրապետության տարածքում պետք է կատարել սեպտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 10-ը՝ կախված տարածքի ծովի մակերևույթից գտնվելու բարձրությունից և տվյալ տարվա կլիմայական պայմաններից:

Ցանքի նորման փոփոխվում է, կախված մշակաբույսի սորտից և սերմի որակից: Այն որոշելու համար պետք է օգտվել հետևյալ բանաձևից՝

$$b = \frac{a \times r \times 100}{1000 \times T \cdot e}$$

որտեղ՝ **Լ** –ն՝ ցանքի նորման է, կգ

**բ** –ն՝ մեկ հեկտարի վրա ցանվող ծլունակ հատիկների քանակը, հատ

**բ** –ն՝ 1000 հատիկի կշիռը, արտահայտված գրամներով.

**Ց. պ** –ն՝ հատիկների ցանքային պիտանելիության մակարդակը, %:

### **4. Մշակաբույսերի ոռոգումը**

Ոռոգվող դաշտերում հացահատիկային մշակաբույսերի ցանքերի ջրումը պետք է իրականացնել հետևյալ հաջորդականությամբ՝

I-ին ջուրը ցանքից հետո (ծլաջուր),

II-ը՝ վաղ գարնանը (կախված հողիտեսքից հնարավոր է 2 անգամ),

III-ը՝ խողովակակալման և հասկակալման փուլում,

IV-ը՝ հատիկալիցի ժամանակ:

### **5. Պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ**

Հիվանդությունները կանխարգելելու նպատակով ցանքը պարտադիր կերպով պետք է կատարել ախտահանված սերմերով:

Բույսերի պաշտպանության աշխատանքների կազմակերպման գործուն մեխանիզմների կիրառման հաշվին ավելացնել առավել վտանգավոր վնասատուների (կրծողներ, մորեխներ, հացահատիկի գնայուկ բզեզ) դեմ պայքարի աշխատանքների արդյունավետությունը:

Հացահատիկային մշակաբույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի համար թունանյութերի պահանջարկը և արժեքը 2009-2012 թվականների համար ներկայացված է 5-րդ աղյուսակում:

Հացահատիկային մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի համար ծրագրվող ժամանակահատվածում տարեկան կպահանջվի 38.2-40.0 տոննա թունանյութեր՝ 235.2 -248.5 մլն դրամ արժեքով:

### **6. Պայքար մոլախոտերի դեմ**

Հացահատիկային մշակաբույսերի ցանքերում մոլախոտերով վարակվածության դեմ պայքարը պետք է կատարվի հերբիցիդներով:

Ծրագրով նախատեսված ցանքերում պայքարի միջոցառումների իրականացման համար հերբիցիդների պահանջարկը և արժեքը 2009-2012 թվականներին ներկայացված է 6-րդ աղյուսակում:

### **7. Ցանքաշրջանառությունը**

Ցանքաշրջանառությունը ժամանակի ընթացքում որոշակի թվով դաշտերում մշակաբույսերի հաջորդականությունն է:

Ցանքաշրջանառությունը ուղղված է՝

1) համապատասխան հողակլիմայական պայմաններում բուսաբուծության զարգացմանը,

2) հողի բերրիության մշտապես բարձրացմանը և մշակվող կուլտուրաներից բարձր և կայուն բերքի ստացմանը,

3) գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը և մթերքների ինքնաբերական իջեցմանը,

4) մեքենայացման միջոցների առավել արդյունավետ օգտագործմանը:

Ներկա պայմաններում ցանքաշրջանառությունը նախընտրելի է կիրառել հետևյալ սխեմաներով.

1) հանրապետության դաշտավայրային գոտում եռդաշտյա կամ քառադաշտ՝

ա) 1-ին դաշտ ցորեն, 2-րդ դաշտ ցորեն կամ գարի, 3-րդ դաշտ սև ցել,

բ) 1-ին և 2-րդ դաշտերում ցորեն, 3-րդ դաշտում գարի, 4-րդ դաշտում սև ցել,

2) նախալեռնային և լեռնային գոտիներում նույնը, սև ցելի փոխարեն կիրառել զբաղեցրած ցելեր (շարահերկ կուլտուրաներ՝ սիսեռ, եգիպտացորեն, կարտոֆիլ, բանջարեղեն և այլն):

Հաշվի առնելով, որ գյուղամերձ տարածքներում վարելահողերը հիմնականում սեփականաշնորհված են և միջինը մեկ ընտանիքին հասնում է 1.5-2 հեկտար, ապա ցանքաշրջանառությունը կիրառելու համար անհրաժեշտ է՝ հողերի համատեղ օգտագործման (խոշորացման) մեխանիզմների կիրառում:

#### **8. Եգիպտացորենի մշակության առանձնահատկությունները**

Եգիպտացորենի մշակությունը իրմեջ ներառում է շարահերկ կուլտուրաների մշակության համար սահմանված հողի մշակման, պարարտացման, ոռոգման, ցանքերի խնամքի և բերքահավաքի տեխնոլոգիական պրոցեսների համակարգը: Հողի մշակությունը սկսվում է աշնանից, գարնանը կատարվում նախացանքային մակերեսային մշակումներ և ցանք: Հիմնական պարարտացումը սկսվում է աշնանից ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերով: Ազոտական պարարտանյութերի մի մասը տրվում է նախացանքային մշակումների տակ կամ ցանքակից: Մյուս մասը հողն է մտցվում սնուցումների կարգով: Ցանքի նորման տատանվում է 15-20 կիլոգրամի սահմաններում՝ կախված սորտից, սերմի որակից: Ցանքը կատարվում է ուշ գարնանը (ապրիլի երկրորդ կեսից մինչև մայիսի առաջին տասնօրյակը): Միջշարային տարածությունը պետք է լինի 70, միջբույսայինը՝ 15-25 սանտիմետր: Խիստ կարևոր է ժամանակին նոսրացումը, միջշարերի մշակությունը (կուլտիվացիան) և հերբիցիդների օգտագործումը: Ոռոգովի տարածքներում ջրումներն իրականացնում են գարնանա-ամառային շրջանում մի քանի անգամ՝ կախված պահանջից: Հատկի համար բերքահավաքը կատարվում է հատուկ եգիպտացորենահավաք կոմբայներով:

#### **9. Գյուղատնտեսական տեխնիկայի ապահովվածությունը**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում առկա գյուղատնտեսական տեխնիկայի 97 տոկոսը օգտագործվում է ավելի քան 20 տարի, օգտագործման նորմատիվային 8 տարվա փոխարեն: Հաշվի առնելով, որ երկար տարիների օգտագործման արդյունքում այն ամբողջությամբ ենթարկվել է ֆիզիկական և բարոյական մաշվածության, ուստի խիստ կարևոր է տեխնիկական պարկի նորացումը: 2009-2012 թվականներին հացահատիկային մշակաբույսերի ցանքի և սև ցելի մշակության համար պահանջվող գյուղատնտեսական տեխնիկայի քանակի և արժեքի վերաբերյալ հաշվարկը, գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և լրացուցիչ պահանջարկի մասին տեղեկությունները ներկայացված են 7-րդ և 8-րդ աղյուսակներում:

#### **10. Սերմնաբուծություն**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածքները բարձր վերարտադրությամբ սերմերով ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) «Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բազայի վրա սերմերի վերարտադրության նպատակով ձևավորել սերմնաբուծության գործառույթ ունեցող կառույց (համակարգ) պայմանագրային հիմունքներով, ընդգրկելով լիցենզավորված ֆերմերային տնտեսություններին: «Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրինության տակ եղած սուպերէլիտային սերմերը պայմանագրային հիմունքներով տրամադրել հացահատիկի արտադրությամբ մասնագիտացված տնտեսություններին էլիտային սերմերի վերարտադրության համար:

Իսկ «Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տարեկան 30 տոննա աշնանացան ցորենի սուպերէլիտային սերմ արտադրելու համար ընկերությունը պետք է մշակի 38 հեկտար վարելահող, որից 19 հեկտարը թողնվելու է սև ցելի, 4 հեկտարը տնկարանների և մայրուտների, իսկ 15 հեկտարը ցանքի համար: Այս աշխատանքները իրականացնելու համար ընկերությանը անհրաժեշտ է 2008 թվականին տրամադրել 7550.0 հազար դրամ արտոնյալ վարկ 5 տարի ժամկետով: Ընկերության կողմից տարեկան արտադրվելիք 30 տոննա սուպերէլիտային սերմը պայմանագրային հիմունքներով կտրամադրվի հացահատիկի արտադրությամբ մասնագիտացված տնտեսություններին էլիտային սերմ արտադրելու համար:

2) Էլիտային սերմեր արտադրելու համար ֆերմերները պետք է մշակեն 300 հեկտար վարելահող, որից 150 հեկտարը սև ցելի տակ, իսկ 150 հեկտարի վրա կատարեն ցանք 300 տոննա էլիտային սերմ արտադրելու համար: Բացի այդ աշնանացան հացահատիկային մշակաբույսերի և եգիպտացորենի սերմի թարմացման համար անհրաժեշտ է տարեկան ներկրել 20 տոննա սուպերէլիտային, 50 տոննա աշնանացան ցորենի էլիտային, 32 տոննա գարու և 42 տոննա եգիպտացորենի բարձրորակ սերմ: Ընդամենը 582 տոննա էլիտային սերմը պայմանագրով կտրամադրվի այլ ֆերմերների I վերարտադրության սերմեր ստանալու համար:

3) I վերարտադրության սերմեր արտադրող ֆերմերները պետք է մշակեն 4800 հեկտար վարելահող, որից 2400 հեկտարը սև ցելի տակ, 2400 հեկտարի վրա կատարեն ցանք՝ 3600 տոննա աշնանացան ցորենի I վերարտադրության սերմեր արտադրելու համար:

**Սուպեր էլիտային և էլիտային սերմերի արտադրության տեխնոլոգիական հաջորդականությանը ներկայացվող պահանջների պահպանման և այդ գործընթացի փուլերի ապահովման համար արդյունավետ մեխանիզմների կիրառման միջոցառումներ**

Նախատեսվում է շարունակել ցորենի էլիտային սերմերի արտադրության դասական տարբերակի կիրառումը, իսկ սուպերէլիտային սերմնադաշտերից ստացված սերմնանյութի որակի գնահատման ժամանակ նաև կիրառել տվյալ վերարտադրության սերմերը ելակետային սերմերի խմբին դասելու մեթոդը: Վերջինս կարող է կիրառվել սերմերի հավաստագրման համակարգի ներդրման գործընթացի ավարտից հետո, բացառապես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանման և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գնահատման արդյունքների հիման վրա:

Ծրագրային առաջին տարում ցորենի էլիտային սերմերի արտադրության տեխնոլոգիական հաջորդականությունն ու ծավալները 2007 թվականի համար ամփոփված են 9-րդ աղյուսակում:

110 տոննա էլիտային սերմերը կգբաղեցնեն շուրջ 440 հեկտար տարածություն կամ կարող է արտադրվել առնվազն 880 տոննա I վերարտադրության սերմ:

Սերմնադաշտերում բազմացվող սորտերի կազմն ու տեսակարար կշիռը սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից:

Աշնանացան ցորենի նախահիմնային և հիմնային սերմերի արտադրության հերթագայության սխեման և տարեկան ծավալները 2007-2011 թվականների համար ներկայացված են 10-րդ աղյուսակում:

Քանի որ աշնանացան գարու սերմի պահանջը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մեծ չէ, ուստի տարեկան ներկրվելիք 32 տոննա էլիտային սերմի բազմացումից կարելի է ստանալ 350 տոննա I վերարտադրության, հաջորդ տարվանից նաև 3200 տոննա II վերարտադրության սերմեր: Նշված քանակությունը լրիվությամբ կապահովի հանրապետությունում գարու սերմի պահանջը:

Հացահատիկային մշակաբույսերի սուպերէլիտային սերմերի վերարտադրության առաջին փուլերում պահանջվում է բարձր որակավորում ունեցող աշխատանք, որի արտադրողականությունը, տեխնոլոգիական օբյեկտիվ պատճառներով ցածր է: Այդ պատճառով արտադրված սուպերէլիտային սերմերի ինքնարժեքը բարձր է լինում դրանց իրացման գնից, որի հետևանքով նման կարգի սերմերի արտադրությունը դառնում է տնտեսապես վնասաբեր:

Ելնելով ցորենի մշակության ռազմավարական նշանակությունից, անհրաժեշտություն է առաջանում արտադրողներին բարձրորակ սերմերի արտադրության համար փոխհատուցել կատարվող լրացուցիչ ծախսերն ու արդյունքում ապահովել սերմարտադրողների արդյունավետ գործունեությունը և սերմերի հետագա վերարտադրությունը: Ընդ որում նախատեսվում է լրավճարները կատարել փաստացի արտադրված սուպերէլիտային սերմերի համար (աղյուսակ 11):

Նախնական հաշվարկների համաձայն՝ սուպերէլիտային սերմերի արտադրության առաջարկվող մեխանիզմի ներդրման շնորհիվ այդ կարգի սերմերի ինքնարժեքը կարող է յուրաքանչյուր արտադրական շրջապտույտից հետո նվազել, սակայն ոլորտի կայուն զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է 3-4 տարի ծրագրի իրականացման մոտեցումներում փոփոխություններ չկատարել:

Հանրապետությունում աշնանացան ցորենի սուպերէլիտային և էլիտային սերմերի ծավալների հաշվարկը ներկայացվում է 9-րդ աղյուսակում, իսկ սուպերէլիտային և էլիտային սերմերի արտադրության փուլերում կատարված լրավճարների արդյունավետությունը գնահատվում է I վերարտադրությունում ստացվող հավելյալ բերքի արժեքով (աղյուսակներ 12, 13):

Էլիտային սերմերով ցանված 1 հեկտար աշնանացան ցորենի դաշտում բերքի հավելումը կազմում է 8 ցենտներ, որի 20 տոկոսը (1.6 ցենտները) կիրացվի որպես կեր 60 դրամ արժեքով, իսկ 6.4 ցենտները՝ կիրացվի որպես I վերարտադրության սերմ 180 դրամ արժեքով: 1 տոննա հավելյալ բերքի իրացման գինը 156.0 դրամ:

**Հացահատիկի շուկայահանման աջակցություն**

Հանրապետության հացահատիկային տնտեսության զարգացման կարևորագույն նախադրյալ է հացահատիկի իրացման, մասնավորապես՝ արտահանման գործընթացին խթանման միջոցառումների իրականացումը, որի համար կարևորագույն պայման կարող է լինել Հայաստանի Հանրապետության հացահատիկի բացասական հաշվեկշիռը (օրինակ, 2007 թվականին արտադրվել և ներ է մուծվել համապատասխանաբար 254.2 և 421.2 հազար տոննա ցորեն, 18.7 և 79.5 հազար տոննա եգիպտացորեն):

**V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ**

Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար պահանջվող ներդրումները ամփոփված ձևով ներկայացված են 14-րդ աղյուսակում:



Ծրագրով նախատեսված միջոցառումների համար պահանջվող տարեկան ներդրումները կազմում են 7.9 - 8.2 մլրդ դրամ, որի մի մասը նախատեսվում է իրականացնել պետության աջակցությամբ:

## VI. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ծրագիրն ավելի ամբողջական դարձնելու համար նպատակահարմար կլինի իրականացնել հետևյալ լրացուցիչ միջոցառումները՝

### 1. Հացահատիկի արտադրության սուբսիդավորում

Այս միջոցառումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրինակով առավել նվազ տնտեսական պոտենցիալ ունեցող համայնքներում:

Արտադրական կարողությունների ունակության բարձրացման և ճյուղի զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով, եգիպտացորեն արտադրող բոլոր սեփականատերերին և համայնքի տարածքից մինչև 20 հեկտար վարձակալած գյուղացիներին մեկ հեկտարի համար սուբսիդավորել 35000 դրամ: 20 հեկտարից ավել վարձակալած ֆերմերներին տրամադրել վարկեր՝ 1 տարի ժամկետով, տարեկան 6 տոկոս դրույքաչափով:

### 2. Գյուղատնտեսական աշխատանքների կատարման գների նորմավորում

Կազմակերպական միջոցառումներ իրականացնել գյուղատնտեսական աշխատանքների կատարման վարձավճարների հետևյալ առավելագույն չափեր սահմանելու համար.

1) հերկ	1հա -	6000	
2) կրկնահերկ	1հա -	4000	
3) կուլտիվացիա	1հա -	3000	
4) ցանք	1հա -	3000	
5) հունձ	1հա -	10000	
6) պարարտանյութերի ցրում	1հա-	500	
7) հերքիցիդների սրսկում	1հա-	1000	

3. Հետագայում ունենալ կենտրոնացված պահեստներ՝ սերմերի վերամշակության և պարենային ցորեն պահելու համար: Վերականգնել եղած հնարավորությունները կամ կառուցել նորը:

4. Բնական աղետներից և հրդեհներից վնասված տարածքների համար ցուցաբերել պետական աջակցություն:

## VII. ԾՐԱԳՐԻՑ ԱՎՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Ծրագրի իրագործման արդյունքում տարեկան կարտադրվի աշնանացան ցորենի 30 տոննա սուպերէլիտային, 300 տոննա էլիտային, 3600 տոննա I վերարտադրության և աշնանացան գարու 350 տոննա I և 3200 տոննա II վերարտադրության սերմեր, որը ամբողջությամբ կապահովի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պահանջը աշնանացան հացահատիկային մշակաբույսերի սերմերի նկատմամբ:

2. Լավագույն պայմաններ կստեղծվեն հացահատիկային տնտեսության զարգացման համար:

3. Մեկ հեկտարից կապահովվի երաշխավորված 25 ցենտներ բերք, որի արդյունքում 2012 թվականին կարտադրվի 128.0 հազար տոննա հացահատիկ, կամ նրանից ստացված համախառն եկամուտը կկազմի մոտ 12.8 միլիարդ դրամ:

4. Կբարձրանա հացահատիկի արտադրության արդյունավետությունը:

## VIII. ԱՐՅՈՒՄԱԿՆԵՐ

Աղյուսակ 1

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

	Չափի միավորը	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.
Ամբողջ ցանքատարածությունները	հա	30416.1	34462.0	43972.8	60363.3	66475.7	59584.5	50500
որից՝ հացահատիկային մշակաբույսեր	հա	27829.0	31642.5	41147.8	57395.8	63620.0	56822.0	47250

Հացահատիկային մշակաբույսերի տեսակարար կշիռը ամբողջ ցանքատարածության մեջ	%	91.5	91.8	93.6	95.1	95.7	95.4	93.6
Հացահատիկի համախառն բերքը	տոննա	36407.7	60942.6	87465.7	81355.3	88496.6	64442.7	52280.9
Մեկ հեկտարի բերքատվությունը	ց/հա	13.1	19.3	21.3	14.2	13.9	11.3	11.0

Աղյուսակ 2

**ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԻՄԵՋ**

Հ/Հ		Չափի միավորը	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.
1.	Գյուղատնտեսության համախառն արտադրանք	մլն դրամ	13905.6	15176.2	21160.1	21715.0	21055.0	20735.5	23812.5
	որից՝ անասնապահություն	մլն դրամ	5833.3	6075.2	7033.1	7948.2	8121.0	8624.8	9093.1
	Բուսաբուծություն,	մլն դրամ	8072.3	9101.0	14127.0	13766.8	12934.0	12110.7	14719.4
2.	որից՝ հացահատիկային մշակաբույսեր	մլն դրամ	3445.0	4935.9	8656.1	8388.2	6426.4	4776.1	5296.6
3.	Հացահատիկային մշակաբույսերի տեսակարար կշիռը գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ	%	24.8	32.5	40.9	38.6	30.5	23.0	22.2
4.	Հացահատիկային մշակաբույսերի տեսակարար կշիռը բուսաբուծության ճյուղում	%	42.7	54.2	61.3	60.9	49.7	39.0	36.0

Աղյուսակ 3

**2009 -2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՏԱԿ ՑԱՆՎԵԼԻՔ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԸՍՏ ՇՐՋԱՆՆԵՐԻ**

( հազ.հա )

Հ/Հ	Շրջանների անվանումը	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
1.	Ասկերան	12.0	12.0	12.0	12.1
2.	Մարտակերտ	7.5	7.5	8.0	8.0
3.	Մարտունի	14.2	14.2	14.2	14.2
4.	Հաղրուք	6.5	6.5	7.0	7.0
5.	Շուշի	0.5	0.5	0.5	0.5
6.	Շահումյան	0.2	0.2	0.2	0.2
7.	Քաշաթաղ	9.1	9.1	9.1	9.5
<b>Ընդամենը ԼՂՀ</b>		<b>50.0</b>	<b>50.0</b>	<b>51.0</b>	<b>51.5</b>
<b>Այդ թվում եզիպտացորեն</b>		<b>3</b>	<b>5.0</b>	<b>5.6</b>	<b>6.2</b>

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2009-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱՔՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ (ՖԻԶԻԿԱԿԱՆ ՔԱՇՈՎ) ԵՎ ԱՐԺԵՔԸ

Գ/Գ	Պարարտանյութի անվանումը	2009թ.		2010թ.		2011թ.		2012թ.	
		Քանակը (տ)	Արժեքը (մլն դր.)	Քանակը (տ)	Արժեքը (մլն դր.)	Քանակը (տ)	Արժեքը (մլն դր.)	Քանակը (տ)	Արժեքը (մլն դր.)
1.	Ամոնիակային սելիտրա	3000.0	360.0	3000.0	360.0	3000.0	360.0	3000.0	360.0
2.	Հասարակ սուպերֆոսֆատ	12850.0	1160.0	12850.0	1160.0	12850.0	1160.0	12850.0	1160.0
3.	Կալիումական աղ	6750.0	540.0	6750.0	540.0	6750.0	540.0	6750.0	540.0
<b>Ընդամենը</b>		<b>22600.0</b>	<b>2060.0</b>	<b>22600.0</b>	<b>2060.0</b>	<b>22600.0</b>	<b>2060.0</b>	<b>22600.0</b>	<b>2060.0</b>

□ պարարտանյութերի գները կարող են փոփոխվել

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒԿ 2009-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱՔՈՒՅՍԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԹՈՒՆԱՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԸ ԵՎ ԱՐԺԵՔԸ

Գ/Գ	Թունանյութերի անվանումը	2009թ.		2010թ.		2011թ.		2012թ.	
		քանակը (տ)	արժեքը (տոն.դր.) (մլն.դր.)	քանակը (տ)	արժեքը (տոն.դր.) (մլն.դր.)	քանակը (տ)	արժեքը (տոն.դր.) (մլն.դր.)	քանակը (տ)	արժեքը (տոն.դր.) (մլն.դր.)
1.	Ախտահանիչ նյութեր	23.2	139.2	23.2	139.2	23.5	141.0	23.6	141.5
2.	Ռողեցողիցիդներ	7.5	28.5	7.5	28.5	7.7	29.0	7.8	29.5
3.	Ինսեկտիցիդներ	7.5	67.5	7.7	69.5	8.0	72.0	8.6	77.5
<b>Ընդամենը</b>		<b>38.2</b>	<b>235.2</b>	<b>38.4</b>	<b>237.2</b>	<b>39.2</b>	<b>242.0</b>	<b>40.0</b>	<b>248.5</b>

**ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԵՐՈՒՄ 2009-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ՊԱՅՔԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՐԲԻՑԻՂՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԸ**

Գ/Գ		Չափի միավորը	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
1.	Պայքարի աշխատանքներում ընդգրկվող տարածքը	հա	15000	15000	15500	15500
2.	Հերբիցիդների պահանջը	տ	15	15	15.5	15.5
3.	Հերբիցիդների արժեքը	մլն դրամ	90.0	90.0	93.0	93.0

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2009-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԻ ԵՎ ՍԵՎՑԵԼԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋԱՂՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԱՐԺԵՔԸ**

Գ/Գ	Տեխնիկայի անվանումը	Մակնիշը	Ընդհանուր պահանջը(հատ)	այդ թվում՝ ըստ տարիների							
				2009թ.		2010թ.		2011թ.		2012թ.	
				Քանակը (հատ)	Արժեքը(մլն դր.)	Քանակը (հատ)	Արժեքը(մլն դր.)	Քանակը (հատ)	Արժեքը(մլն դր.)	Քանակը (հատ)	Արժեքը(մլն դր.)
1.	Թրթուրավոր տրակտոր (100/120 ձ/ուժ հզորությամբ)		51	9	76.5	10	85.0	10	85.0	11	93.5
2.	Անիվավոր տրակտոր (մինչև 130ձ/ուժ հզոր.)		168	30	333	32	355.2	34	377.4	36	399.6
3.	Թրթ.տրակտոր	S-70U	43	8	56.0	8	56.0	9	63.0	9	63.0
4.	Անիվ. տրակտոր	ՄՏՁ-82	34	15	105	16	112	17	119	18	126
5.	Գուլթան	Պ-5-35	252	45	81.0	48	86.4	51	91.8	54	97.2
6.	Կուլտիվատոր	ԿՖԳ-4	43	8	16.8	8	16.8	9	18.9	9	18.9
7.	Կուլտիվատոր	ԿՐԳ-3.6	168	30	63	32	67.2	34	71.4	36	75.6
8.	Ձիգզագ սկավառակավոր	ԲՕ-10	168	30	13.5	32	14.4	34	15.3	36	16.2
9.	Ձիգզագ ատամնավոր	3-ՕՐ -0.7	43	8	3.5	8	3.5	9	4.0	9	4.0
10.	Շարքացան	ՍՁՈԼ-3.6	127	23	55.2	24	57.6	26	62.4	27	64.8
11.	Սրսկիչ	ՅՎՏ-1ա	40	8	6.4	8	6.4	8	6.4	8	6.4
12.	Հատիկամաքրիչ	ՅՎՊ-20ա	40	8	12	8	12	8	12	8	12
13.	Հացահատիկի կոմբայն	ՍԿ-5	252	45	967.5	48	1032.0	51	1096.0	54	1161.0
14.	Սերմազտիչ	ՍՄ-4	40	8	16.8	8	16.8	8	16.8	8	16.8
15.	Տոփան	ՍԿԳ-2.2	25	5	1.5	5	1.5	5	1.5	5	1.5
16.	Սերմաախտա-	ՊՍ-10	25	5	6.0	5	6.0	5	6.0	5	6.0

	հանիչ										
17.	Պարարտանյութի ցրիչ	ԵՐՈՒ-0.5	51	9	5.4	10	6.0	10	6.0	11	6.6
18.	Եգիպտացորենի շարքացան		16	10	25.0	2	5.0	2	5.0	2	5.0
19.	Եգիպտացորենի կուլտիվատոր		16	10	21.0	2	4.2	2	4.2	2	4.2
20.	Եգիպտացորենահավաք կոմբայն	KCKY-6AC-18	40	25	537.5	5	107.5	5	107.5	5	107.5
	Ընդամենը				2402.6		2051.5		2169.6		2285.8

**Աղյուսակ 8**

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅԱՆՋԱՐԿԸ**

Ջ/Ջ	Տեխնիկայի անվանումը	Ընդամենը՝ պահանջը	Փաստացի առկա է	որից՝		Պահանջվում է լրացուցիչ նոր տեխնիկա
				Ժամկետանց (նաշվածութ. 80%-ից ավել)	օգտագործման ենթակա	
1	Հերկի տրակտորներ	320	602	402	120	200
2	Թրթ. տրակտոր S-70U	80	83	66	17	63
3	Անիվ. տրակտոր USQ-82	80	158	125	33	47
4	Գուրբան հերկի	320	575	405	170	150
5	Կուլտիվատորներ համատարած	211	193	113	80	131
6	Զիզգագ սկավառակավոր և ատամնավոր	211	200	139	61	150
7	Շարքացան հացահատիկային	127	291	231	60	67
8	Սրսկիչ	40	30	20	10	30
9	Սերմագտիչ	60	118	108	10	50
10	Հացահատիկի կոմբայն	252	268	214	54	198
11	Պարարտանյութի ցրիչ	51	35	15	20	31
12	Եգիպտացորենի շարքացան	16	-	-	-	16
13	Եգիպտացորենի կուլտիվատոր	16	-	-	-	16
14	Եգիպտացորենահավաք կոմբայն	40	-	-	-	40

**ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԷԼԻՏԱՅԻՆ ՍԵՐՄԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒ ՓԱՍՏԱՑԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ 2007 ԹՎԱԿԱՆԻՆ**

Գ/Գ	Սերմնադաշտերի ծագումը	Աշնանացան ցորեն		
		զբաղեցրած տարածությունը (հա)	սերմացուի ելքը միավոր տարածությունից (տոննա)	ընդամենը կարտադրվի հաջորդ վերարտադրության սերմ (տ)
1.	I տարվա տնկարաններ	0.04	-	-
2.	II տարվա տնկարաններ	0.1	0.12	0.12
3.	Բազմացման վերջին տարվա տնկարան նախահիմնային սերմերի ստոցման համար	0.6	2.5	1.2
4.	Նախահիմնային սերմերի ցանք սուպերէլիտային սերմերի արտադրության համար	6.0	2.5	11
5.	Սուպերէլիտային ցանք էլիտային սերմերի ստացման համար	55.0	2.5	110

**ԱՇՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆԻ ՍՈՒՊԵՐԷԼԻՏԱՅԻՆ ԵՎ ԷԼԻՏԱՅԻՆ ՍԵՐՄԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԿՐՎԵԼԻՔ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ**

Սերմնադաշտերի ծագումը, զբաղեցրած տարածքը, արտադրվող և ներկրվելիք սերմի քանակը	սուպերէլիտա				էլիտա				I վերարտադրության				
	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2011 թ.	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2011 թ.	2008 թ.	2009 թ.	2010 թ.	2011 թ.	2012 թ.
Բարձր վերարտադրության սերմեր ստանալու համար ցանք, հա	12	15	15	15	-	22	25	25	64	200	200	2200	2200
Ընդամենը կարտադրվի սերմ, տ	-	25	30	30	11	-	45	50	-	128	400	4000	4400
Ներկրվելիք սերմ	-	20	20	20	50	50	50	50	-	-	-	-	-

**ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՍՈՒՊԵՐԷԼԻՏԱՅԻՆ ՍԵՐՄԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՁՎՈՂ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ**

Գ/Գ	Տարիները	Աշնանացան ցորեն				
		սուպերէլիտա -յին սերմերի քանակը (տոննա)	մեկ տոննայի ինքնարժեքը + շահույթը (հազ.դրամ)	մեկ տոննայի իրացման գինը (հազ.դրամ)	պահանջվում է լրավճար մեկ տոննայի համար (հազ.դրամ)	ընդամենը պահանջվում է լրավճար (հազ.դրամ)
1.	2007	11	295	160.0	135.0	1485.0
2.	2008	-	-	-	-	-
3.	2009	25	295	160.0	135.0	3375.0
4.	2010	30	295	160.0	135.0	4050.0
5.	2011	30	295	160.0	135.0	4050.0
	<b>Ընդամենը</b>					<b>12960.0</b>

**ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԷԼԻՏԱՅԻՆ ՍԵՐՄԵՐԻ  
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿ**

Գ/Գ	Տարիները	Աշնանացան ցորեն				
		Էլիտայի ն սերմերի քանակը (տոննա)	մեկ տոննա էլիտային սերմերի հաշվին հաջորդ տարի սպասվող բերքի հավելումը (տոննա)	մեկ տոննա I վերարտադ- րության ցորենի հավելյալ բերքի իրացման գինը (հազ.դրամ)	հավելյալ բերքի արժեքը (հազ. դրամ)	
					մեկ տոննա էլիտային սերմերի հաշվով	ամբողջ բերքի հաշվով
1.	2008	110	3.2	156.0	499.2	54912.0
2.	2009	-	-	-	-	-
3.	2010	450	3.2	156.0	499.2	224640.0
4.	2011	500	3.2	156.0	499.2	249600.0
	<b>Ընդամենը</b>					529152.0

Աղյուսակ 13

**ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ I ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԵՐՄԵՐԻ  
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿ**

Աշնանացան ցորեն						
Գ/Գ	Տարիները	I վերար- տադրու- թյան սերմերի քանակը (տոննա)	մեկ տոննա I վերարտադրության սերմերի հաշվին հաջորդ տարի սպասվող բերքի հավելումը (տոննա)	մեկ տոննա հավելյալ բերքի իրացման գինը (հազ.դրամ)	հավելյալ բերքի արժեքը (հազ. դրամ)	
					մեկ տոննա I վերարտադ- րության սերմերի հաշվով	ամբողջ բերքի հաշվով
1.	2009	960	3.2	85.0	272.0	261120.0
2.	2010	300	3.2	85.0	272.0	81600.0
3.	2011	3000	3.2	85.0	272.0	816000.0
	<b>Ընդամենը</b>					<b>1158720.0</b>
Աշնանացան գարի						
1.	2009	350	2.1	85.0	178.0	62300.0
2.	2010	350	2.1	85.0	178.0	62300.0
3.	2011	350	2.1	85.0	178.0	62300.0
	<b>Ընդամենը</b>					<b>186900.0</b>

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ 2009-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

Գ/Գ	Ներդրումների նպատակը	Չափի միավորը	Տարիները							
			2009		2010		2011		2012	
			Ընդամենը	որից պետ. աջակցություն կամ վարկավորում	Ընդամենը	որից պետ. աջակցություն կամ վարկավորում	Ընդամենը	որից պետ. աջակցություն կամ վարկավորում	Ընդամենը	որից պետ. աջակցություն կամ վարկավորում
1.	Սև ցեղի մշակում	մլն դր.	525.0	350.0	525.0	350.0	525.0	350.0	525.0	-
2.	Թունաքիմիկատների ձեռք բերում	մլն դր.	235.2	47.0	237.2	47.5	242.0	48.5	248.5	50.0
3.	Պարարտանյութերի ձեռք բերում	մլն դր.	2060.0	100.0	2060.0	100.0	2060.0	100.0	2060.0	100.0
4.	Տեխնիկայի ձեռք բերում	մլն դր.	2402.6	350.0	2051.5	450.0	2169.6	550.0	2285.8	550.0
5.	Հերբիցիդների ձեռք բերում	մլն դր.	90.0	18.0	90.0	18.0	93.0	18.5	93.0	18.5
6.	Սերմերի ձեռք բերում և օգտագործում	մլն դր.	2240.0	128.0	2240.0	128.0	2240.0	128.0	2240.0	128.0
7.	Հացահատիկային մշակաբույսերի ցանքի վարկավորում	մլն դր.	500.0	500.0	500.0	500.0	500.0	500.0	500.0	500.0
8.	Եգիպտացորենի ցանքի վարկավորում	մլն դր.	50.0	50.0	50.0	50.0	50.0	50.0	50.0	50.0
9.	Եգիպտացորենի ցանքի պետական աջակցություն	մլն դր.	105.0	105.0	175.0	175.0	196.0	196.0	217.0	217.0
	Ընդամենը	մլն դր.	8207.8	1648.0	7928.8	1818.5	8075.6	1941.0	8219.3	1613.5
	որից՝ պետական աջակցություն	մլն դր.		555.0		625.0		641.0		317.0
	վարկավորում	մլն դր.		1093.0		1193.5		1295.0		1296.5